# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
## 13 փետրվարի 2025թ-ին կնքված N «ՎԱԲՏ-ՄԱԾՁԲ-25/1-1» ծածկագրով՝ Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի

ք.Երևան

«20» հունիսի 2025թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գարիկ Բոշյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ա. Բաբայանի (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 2-րդ ենթակետը, ինչպես նաև «ՎԱԲՏ-ՄԱԾՁԲ-25/1-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. *Համաձայնագրի առարկան*

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին՝ Պայմանագրում կատարել փոփոխություն:

1.1.1 Պայմանագրի գինն ավելացնել 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով և 4.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 550 000 (հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:»

1.2 Հաստատել Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը՝ հավելված N 1-ի և վճարման ժամանակացույցը՝ հավելված N 2-ի համաձայն:

### 2. *Այլ պայմաններ*

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

### 3. *Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Վարչապետի աշխատակազմ | «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ Կառավարական տուն 1 | ք.Երևան, Կոմիտաս 49/4 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | ԱՄԻՕ ԲԱՆԿ ՓԲԸ |
| Հ/Հ 900011024040 | Հ/Հ 1150012490810100 |
| ՀՎՀՀ 02505554 | ՀՎՀՀ 00219641 |
| | Տնօրենի պաշտոնակատար Ա.Բաբայան |
| ------------------------- | ------------------------- |
| ստորագրություն /Կ.Տ. | ստորագրություն /Կ.Տ. |

Հավելված թիվ 1
«13» փետրվարի 2025թ. կնքված
ՎԱԲՏ-ՄԱԾՁԲ-25/1-1 ծածկագրով պայմանագրի
« 20 » հունիսի 2025թ. կնքված N 1 Համաձայնագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | Ընդհանուր առավելագույն գինը /ՀՀ դրամ | Ընդհանուր քանակը | Մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը |
| 1 | 71631110-1 | Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողության ժամանակ օգտագործվող գործիքների և սարքավորումների «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-22-Ն օրենքով սահմանված կարգով ստուգաչափում: Ստուգաչափումն իրականացվելուց հետո պետք է տրվի ստուգաչափման մասին վկայական: Ըստ անհրաժեշտության կատարվում է նաև տեսակի հաստատման գործառույթ և տրվում փաստաթուղթ, որը հավաստում է չափման միջոցի տեսակի հաստատված լինելը: Ստուգաչափման բացասական արդյունքների դեպքում ստուգաչափողը մարում է ստուգաչափման դրոշմի արտատիպը և տալիս է ծանուցագիր չափման միջոցը ոչ պիտանի ճանաչելու մասին: | դրամ | 550000 | 1 | ք. Երևան Կոմիտասի պող., 49/4 շենք | 03.01.2025թ - 25.12.2025թ. |

* Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:
**Վճարումները կիրականացվի փաստացի մատուցված ծառայությունների դիմաց՝ համաձայն գնացուցակի (Պայմանագրի հավելված N 1.1):

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու**
Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011024048
ՀՎՀՀ 02500554

/ ստորագրություն /
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ
ք.Երևան, Կոմիտաս 49/4
ԱՄԻՕ ԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 1150012490810100
ՀՎՀՀ 00219641
Տնօրենի պաշտոնակատար Ա.Բարսյան

/ ստորագրություն /
Կ.Տ

*Հավելված թիվ 2*
*«13» փետրվարի 2025թ. Լնքված*
*ՎԱԲՏ-ՄԱԾՁԲ-25/1-1 ծածկագրով պայմանագրի*
*« 20 » հունիսի 2025թ. կնքված N 1 Համաձայնագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց առավելագույն վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71631110-1 | Սարքերի ստուգման ծառայություններ | 0 | 250000 | 250000 | 350000 | 350000 | 550000 | 550000 | 550000 | 550000 | 550000 | 550000 | 550000 | **550000** |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024040
ՀՎՀՀ 02505554

(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ
ք.Երևան, Կոմիտաս 49/4
ԱՄԻՕ ԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 1150012490810100
ՀՎՀՀ 00219641
Տնօրենի պաշտոնակատար Է. Բաբայան

(ստորագրություն)
Կ.Տ.